

Գ.Ա.ՐՈՒՆ Վ.ԵՐԱ.Գ.Ա.ՐՁ



Ոչ եւս արեւ տիեզերաց առ խոնարհ
Քերեալ կողիւք՝ զընայ ընդ ուղ ցըրտահար ,
Համառօտեալ հապճեալ զընթացս օրավար ,
Լըրթնատեսիլ , յանփառունակ գարշապար .
Այլ ի տակաւ յարփիս վերին զոսկեսար ,
Դարձուցանէ սահուն ըզկառան օգապար :

Կամարք երկնից նրսեմաստուեր ,

Լուսանորոգ խայտան յայեր .

Հոսեալ ամպոցըն ձիւնաբեր

Ծոցք սառնամած պարզին ի ջեր .

Ամայութիւն հէք ,

Ոչ եւս պատէ շուրջ .

Դարձեալ անձկաբեկ ,

Գան ընդ երկինս լուրջ ,

Հիւրք մերոց յարկաց ,

Գուշակ աւետեաց

Գարուն աւուրց աւետաբերք ,

Ժիր ծիծառնուկք մեր երդասէրք :

— Օրհնեալ ծիծռունք օգապարիկ ,

Օրհնեալ նոցին քաղցր աւետիք :

Հասին աւուրք գարնայնի .

Եւ բընութիւն ամայի ,

Գեղապարոյր շրպարի ,

Յերանգ պէսպէս յերփն յերփնի ,

Ջերդ նորաշուք արքայի ,

Ի նրկարէն ծիրանի :

Ոչ եւս երկիր ունայն ծածկեալ ձիւնաթաղ ,

Գեղատըխուր , մեռելատիպ , սառնապաղ .

Այլ աւանիկ նորապարգեւ ի կենցաղ ,

Պայծառանայ ի զուարթ փըթիթս հաղ քան զհաղ :

Ընդ խորածոր , խոխոմաձիգ ,

Լերանցամէջ գըրդին ի զնաց ,

Ոտնակառեալ խօսուն ալիք .
Գանգիւնք դեղդեղ արձագանգաց
Ջարթնուն լրոին լերանց ի լուր ,
Եւ ծաւալին դաշտ ընդ բըլուր .

Առ ջերոտ նըշոյլ ,
Նորալոյս արփույն ,
Լուծեալ հոյլ ի հոյլ ,
Կոհակաց ողջոյն :

— Օրհնեալ գանգիւնք արձագանգացըն թափանց ,
Օրհնեալ թաւալ դըղջիւնք վէտ վէտ ծորանաց ,
Ձերդ մատուակ գան գարահոս ի լերանց ,
Սահեալ զափամբք ցամաք հովտաց ծարաւեաց ,
Ձինջ պաշտելով բաժակ դեղուն նոր ծըղեաց ,
Եւ գետածին խարչափաձայն պուրակաց :

Երփինունակ , զարմինազան ,
Ծիւք ծաղկածին , բողբոջք գունեան ,
Շագլին բոյլ բոյլ՝ քաղցրահոսան
Ձեզերբք առուացըն դաշտական :

Ի բուրաստանին ,
Վարդենին անոյշ ,
Ըզծիրանածին ,
Նուրբ ծըղեօք քընքոյշ ,
Յեռու զինչ մանեակ ,
Ըզփունջ կարմրորակ :

Իսկ շահպուրակ եւ առ նըմին շահըբրամ ,
Սպիտակախայտ , շողշողենի , վառ շուշան ,
Քօղապատեալ կապոյտ մանուշ , համասպրամ ,
Կըրթեն զուշ , սիրտ չըքնաղ ի բոյր , գեղս յուղփեան :

— Օրհնեալ ըսփիւռ ծաղկունք դաշտաց ,
Որ զերփն յեղեալ յերփն երանդաց ,
Գորգ անկուածոյ պարզեն մարգաց ,
Ի տիպ զարդու ճոխ տաճարաց :

Ահա ծաղկունք ու ահա տերփուկ դեռածին ,
Բողբոջազարդ ի գիրկ երկրի ծիծաղին ,
Հանգոյն փափկիկ ծընունդք ի մօր ծոց ջերին .
Այլ զի անփորձ ճառագայթից տօթագին ,

Արեգական արդ թեւակոխ բարձր յերկին ,
Գեղածաւալ հեշտ հովանիք տարածին ,
Յոստախիտ ի ծառոց ,
Առ նոքօք կանգնագեղ
Բարձրածայրք յայեր ծոց ,
Բեկանեն յորդատեղ
Ըզհրացան սուր ի խայթս՝
Երկնահոս ճառագայթս :

Թաւ կաղամախ , ստուարաստեղն , ամրոստեան ,
Լայնատարած , խըրոխտ յօդոց մէջ կանգուն .
Եւ եղեւին նըրբին ոստովք սըխրական ,
Երկնակատար բարտին յաւէտ դողդոջուն :

— Օրհնեալ ախորժ հեշտ հովանիք .

Օրհնեալ ոստոց սօսիւն մեղմիկ .

Արդ ուղեւոր մինչ ի նուազել կան ոգիք ,
Հատեալ զերկայն տաղտուկ շաւիղ տարածիդ ,
Մատչի յըսփիւռ ի հովանիս անուշիկ ,
Ի դիւր սըրտին առ կախ ոստովք քաղցրասիգ :

Եւ հովիւ առ ըստուեր ,

Յորժամ ընդ եթեր ,

Տապք եռան ջեր ,

Ըզհօտ տանի գէր .

Եւ դադարէ ի լըռանիստըն ծըմակ ,
Զըւարթացեալ յառուին սահ սահ կարկաչունս .
Որ մօտ քերեալ գըլէ զալիս ներդաշնակ ,
Նըւագաւոր խառն ընդ սրնգին յեղյեղմունս :

Ընդ դագաթունս լերանց բարձանց ,

Գայ յամրընթաց ամպ զովագին ,

Մերկ բացօթեայ անշուք դաշտաց ,

Ի տարածել ըզհովանին .

Կամ ըզմարդարիտ ,

Յանել ցօղ ի շիթ :

— Օրհնեալ թեթեւ ամպ կենսաձիր ,

Օրհնեալ ընդ տունկս ցօղ ցան ի ցիր .

Փըթթի գարուն բարեաց ծընող լիալիր ,
Սիրատենչակ գեղոյ , զարդուց երկնաձիր .

Ի դունագեղ ի պաճուճանս ճոխ երկիր ,
Շողայ՝ հանգոյն խորան շրքեղ լայնալիր :

Իսկ ի բանալ լուսապատար ,
Ադինատիպ գրրախտին վառ .
Ոսկի դրրանց ծիրանածայր ,
Անդ ի բարձունս երկնածրար ,
Նախկին կուսագեղ
Գայ այգ զարգաշուք .
Խոպուպիք գեղ գեղ
Ձինջ զուլամբ փափուկ .

Տոհորակեալ ճոխ ճեմերով խայտալից ,
Բարձր ի վերայ կանաչ լերանց եւ բլլրոց ,
Եւ մրտանէ յիւրն ի խորան ծաղկալից .
Բարդ յանդիման բոյր գիզանայ գիրգ խընկոց .
Ըստ յառաջել հերձեալ այերց խաղաղիկ ,
Սիւգ հովաշունչ զարթնու ի քայլսրն հեղիկ :

Եւ տարմատարմ հաւուց դասակ ,
Հանդէպ դիմացն ի թեւս արձակ ,
Խաղ յօրինեն գունակ գունակ ,
Ողջուներով զինքն ի նըւագ :

Չուարթաթըռիչ որ ի բարձանց մըխի խոր ,
Ըզխայտաբղէտ կակուղ փետուրսրն բոլոր ,
Արեգական ընդ շող պարզեալ գեղաւոր .
Որ ընդ ընկեր զըւարճաձայն գայ յոգոր
Ի յեղյեղմունս ձայնից , երգոց դաշնաւոր
Առ ելեւելս առնել զմիմեամբք անդանօր :
Ի թաւաթուփս ծաղկազարդիկ ,
Շուշանափայլ խայտայ սիրուն ,
Անմեղութեան երկնացելիկ ,
Ձըքնաղ պատկեր թիթեռ թըրթուռն ,
Որ թըռչանօք երագարագ՝ թելադիր
Կայ որսողին մի զակն յառել յոյս պատիր .
Եւ ձիգ ընդ հետս իւր թըռչանացըն գերեալ ,
Ըզմահացուին բիբս անբըթիթ ի զընին ,
Տանի յերկինս ուստ ամենայն դան ծաւալ
Ձիւք եւ պարգեւք ու օրհնիս հանել Տըւողին :

— Օրհնեալ զըւարթ այդ վարդամատ .

Օրհնեալ սիւղ սուրբ , երկնային թաթ ,
 Որ զարթուցեալ զհովտաց փրթիթս ցօղակաթ ,
 Ծիւ ծիւ զծաղկունս եւ զերդ բուրվառ ձոյլ յարծաթ ,
 Ճօճէ ծուփ ծուփ ի տատան ,
 Տեառն Ադոմիայ յանդիման .
 Եւ բարդ ընդ ծուխն հոտեւան ,
 Ըզմահացուին օրհնութեան ,
 Կրդկաթ սրբտին ըզգացման ,
 Տանի զդողդոջ շունչ ըզբան :

Որ ըզխոնարհ բառնայ ճակատ ընդ երկին ,
 Յոսկեձեղուն , կամարանման ի պարզուած ,
 Ուր փայլ ի փայլ երփնագոյն ամպք ոսկեծին ,
 Զերդ ծոպք փաղփուն կախ կան ի զարդ երկնամած .
 Եւ ի ստորեւ վայրաբերեալ զակն յերկիր ,
 Փառազարդիկ քան զարքունեաց ըզտաճար .
 Ընդ հրաշագեղ ըզբանչելիսն ի յաթիւ ,
 Եւ յէն էից զօրհնաբանող իւր քընար ,
 Յերգոց սրբտառուչ ,
 Հարկանէ մըրմունջ :

Հ . Ա . Ե .

Սեր որդիական . — Սնապարճն
 Տէգուշի .

Տես Գոռնէյի Տօն Սանչիւն մէջ այն
 տեսարանը յորում Սանչ որդիքը ձկնորւ
 սի մը որդի կը համարի, կը տեսնէ զանի .

կայ և բովանդակ արքունեաց առջև չքա
 շուիր զինքը հայր ճանչնալու : փուճ տեղ
 պարատականացմէ ոմանք Սանչի կա
 ընկեցելով , ոմանք կատակելով չեն ու
 զեր հաւատալ . փուճ տեղ կը մերժեն
 ձկնորսը՝ զոր Սանչ իբրև հայր կ'ողջու
 նէ , և յանձն չառնուր ուրանալ իր հայ
 րը կամ երեսէ թողուլ .

Ըսպառնայ ահագնասաստ , եւ եռացեալ բարկութեամբ
 Գոչէ մեծաբարբառ՝ դարձուցանել զհայրն ինքեան ¹ :

կ'երթայ համարձակ կը խնդրէ զինքը
 իզպակել թագուհիէն , զոր կը սիրէր , և
 ինքն ալ անկէ սիրուած էր , որուն յոյսն
 ու խորհուրդներն այս ծանօթութեամբ
 'ի դերև կ'ելլեն : Վ իպասանութեանց ու
 թատրերգութեանց մէջ թագուհի մը

կրնայ անծանօթ ասպետ մը սիրել , բայց
 ձկնորսի մը որդին ոչ երբէք : Այս բանս
 Սանչ գիտնալով՝ կը հեծեծէ իբրև սի
 րահար . բայց և այնպէս որդիական գո
 ղովն այն սիրոյն կը յաղթէ .

Զաւակ եմ ձըկնորսի , այլ ոչ անարդ վատթարի ,

1 Ա . Ե . Տես . Դ .